Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 21-ի N 2291-Լ որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ), ՄԻՋԻՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԻՆՉԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ն ԸՆԴԳՐԿՎԱԾ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված ընտանիքների՝ Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ՈՒՀ) 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դրությամբ սահմանված կարգով հրամանագրված և ըստ համապատասխան կրթական աստիճանների կամ ծրագրերի (արհեստագործական, միջին, բակալավր, անընդհատ և ինտեգրացված, մագիստրատուրա, ասպիրանտուրա, կլինիկական օրդինատուրա) վճարովի համակարգում ընդգրկված սովորողներին (այսուհետ՝ սովորող) ուսման վարձի փոխհատուցման տրամադրման գործընթացը, պայմանները և չափերը:

2. Սույն կարգով փոխհատուցում են ստանում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից հրապարակված ցանկում ներառված ՈՒՀ-երում սովորողները, ովքեր հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1957-Լ որոշման շահառուներ:

3. Սույն կարգով սովորողին ուսման վարձի փոխհատուցումը տրամադրվում է 2023-2024 ուսումնական տարվա համար՝ ըստ կիսամյակների՝ հիմք ընդունելով

ՈՒՀ-երի համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված ուսման վարձի չափը, ընդ որում՝ բակալավրի, անընդհատ և ինտեգրացված, մագիստրոսի կրթական ծրագրերի համար ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 163-Ն որոշմամբ սահմանված՝ ըստ կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների ուսման վարձի առավելագույն չափը, իսկ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սույն կարգի շահառու հանդիսացող սովորողների ուսման վարձի փոխհատուցումը տրամադրվում է տվյալ ուսումնական հաստատության կողմից տվյալ տարվա համապատասխան մասնագիտությամբ սահմանված ուսման վարձավճարի չափով:

4. Սովորողներին 2023-2024 ուսումնական տարվա համար տրվում է փոխհատուցում հետևյալ չափերով և պայմաններով՝

1) 1-ին կիսամյակի համար տվյալ կիսամյակի ուսման վարձի 100 տոկոսի չափով, անկախ նախորդ ուսումնական տարվա արդյունքում ձևավորված միջին որակական գնահատականից (այսուհետ՝ ՄՈԳ) կամ առաջադիմությունից, առաջին կուրսում սովորողների պարագայում՝ ընդունելության արդյունքներից.

2) 2-րդ կիսամյակի համար տվյալ կիսամյակի ուսման վարձի 100 տոկոսի չափով՝ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի արդյունքում ՄՈԳ-ի 65.00 տոկոսը հաղթահարելու դեպքում, իսկ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողի պարագայում՝ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի արդյունքում 50 տոկոսից ոչ պակասը «գերազանց» և (կամ) «լավ» գնահատականներ ունենալու դեպքում:

5. Սույն կարգով սահմանված փոխհատուցումը չի տրվում, եթե՝

1) սովորողը տեղափոխվել է այլ ՈՒՀ կամ սահմանված կարգով փոխել է կրթական ծրագիրը.

2) սովորողն ուսման վարձի ամբողջական փոխհատուցում է ստանում այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձի կողմից:

6. Սույն կարգի շրջանակներում շահառուներին ուսման վարձի փոխհատուցում կարող է տրամադրվել նաև տեղական և միջազգային կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց կողմից (այսուհետ՝ ֆինանսավորող) և նրանց կողմից հատկացված դրամական միջոցների հաշվին՝ վերջիններիս հետ կնքելով գրավոր համաձայնագիր՝ անձնական տվյալների գաղտնիությունը երաշխավորող պայմանների ընդգրկմամբ:

7. Եթե սովորողն օգտվում է ՈՒՀ-ի կողմից սահմանված ուսման վարձի մասնակի փոխհատուցման իրավունքից կամ ուսման վարձի մասնակի փոխհատուցում է ստանում այլ ֆինանսավորողի կողմից, ապա փոխհատուցվում է ուսման վարձի մնացորդային գումարի չափով:

2. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

8. Սովորողները սույն կարգի շրջանակներում փոխհատուցում ստանալու համար դիմում են ՈՒՀ-ին:

9. ՈՒՀ-ը կազմում և նախարարությանն է տրամադրում սովորողների անվանացանկ՝ նշելով՝

1) սովորողի նույնականացման տվյալները.

2) կրթական աստիճանը, մասնագիտությունը (կրթական ծրագիրը), կուրսը, ուսուցման ձևը, ՄՈԳ-ի չափը, առաջադիմության վերաբերյալ տեղեկատվությունը.

3) կիսամյակի ուսման վարձի չափը.

4) կարգավիճակը (Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշմամբ հաստատված ժամանակավոր վկայական, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1957-Լ որոշման շրջանակում շահառու).

5) այլ տեղեկատվություն (ըստ անհրաժեշտության):

10. Նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների պարագայում՝ սույն կարգի 9-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը լրացվում է նաև մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (առկայության դեպքում) սովորողների անվան դիմաց:

11. Սույն կարգի 9-րդ կետում նշված անվանացանկը ճշգրտվում է Միասնական սոցիալական ծառայության գրանցամատյանների հետ, որտեղ ստուգվում է սույն կարգով նախատեսված պայմանների առկայությունը:

12. Սովորողներին փոխհատուցման ենթակա ֆինանսական միջոցները ՈՒՀ-երին տրամադրվում են նվիրաբերության պայմանագրերի (լրացումների և փոփոխությունների դեպքում՝ համաձայնագրերի) հիման վրա՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր ՈՒՀ-ի կողմից ճշտված և նախարարություն ներկայացված անվանացանկերը:

13. Ուսումնառությունը 2023-2024 ուսումնական տարում ընդհատած (պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում) սովորողը սահմանված կարգով և ժամկետներում վերականգնվելիս պահպանում է սույն կարգով փոխհատուցում ստանալու իրավունքը:

14. Սույն կարգի 7-րդ կետով նախատեսված դեպքերում ուսման վարձի փոխհատուցման գումարները վճարելու հետ կապված գործողություններ իրականացնելու նպատակով նախարարությանը թույլատրել՝

1) ֆինանսավորողի և ՈՒՀ-ի հետ կնքել համապատասխան պայմանագիր՝ անձնական տվյալների գաղտնիությունը երաշխավորող պայմանների ընդգրկմամբ.

2) ֆինանսավորողին տրամադրել շահառուների ցուցակներ՝ պայմանագրով սահմանված կարգով: Ընդ որում, պայմանագրով սահմանված պայմաններով շահառուի ուսման վարձի փոխհատուցումը վճարվում է ֆինանսավորողի տրամադրած ֆինանսական միջոցներից, իսկ դրանց բացակայության կամ անբավարարության (մասնակի վճարման) դեպքում՝ սույն որոշմամբ նախատեսված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ